



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



**ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԵ ԷՆՍԻՆՈՅԻ
Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ**

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, Մարտը 15ը Մեծ Պահոց 4-րդ Կիրակին է, որ կը կոչուի՝ Տնտեսի Կիրակի:

Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան պիտի հանդիսապետէ Էնսինոյի Սրբոց Նահատակաց Եկեղեցւոյ Պատարագի արարողութեան եւ պիտի տայ իր պատգամը:

Նշենք նաեւ որ նոյն օրը ՀՕՄ-ի Հոլիվուտի «Մայր» Մասնաճիւղը կազմակերպած է Մեծ Պահոց ճաշկերոյթ, մը որ տեղի պիտի ունենայ Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ: Սոյն ձեռնարկին ներկայ պիտի ըլլայ եւ Առաջնորդ Սրբազան Հօր օրհնութեան խօսքը պիտի փոխանցէ Ս. Կարապետ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Վիգէն Ա. Թիւրք. Վասիլեան:

**PRELATE TO PRESIDE OVER DIVINE LITURGY AT
HOLY MARTYRS CHURCH**

Sunday, March 15 is the fourth Sunday of Great Lent, the Sunday of the Steward.

On this day, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will preside over Divine Liturgy at Holy Martyrs Church in Encino and deliver the sermon.

In the afternoon, a Lenten lunch organized by the A.R.S. "Mayr" Chapter of Hollywood will take place at "Karapetian" Hall of St. Garabed Church. Pastor of St. Garabed Church Archpriest Fr. Vicken Vassilian will attend and convey the Prelate's blessings.

Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԱՀԱՄԻ ՍՐՑՈՒՄՆԵՐՈՒՆ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան, Կիրակի, Մարտ 15-ի կ.ե. ժամը 4:30-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի

Եւ ՔԱՅԱՄ-ի 25-րդ մարզախաղերուն փակման հանդիսութիւնը եւ աշակերտական տողանցքը տեղի պիտի ունենայ Կլենտէյլ Քոլէճի մարզադաշտին մէջ:

Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արժ. Տ. Վազգէն Քիւնյ. Աթմաճեան ներկայ պիտի ըլլայ փակման հանդիսութեան եւ պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազանին օրհնութեան խօսքը:

PRELATE REPRESENTED AT THE CLOSING CEREMONY OF THE KAHAM GAMES

On the afternoon of Sunday, March 15th, the closing ceremony of the 25th KAHAM games will take place at Glendale College.

The games are organized annually by the Homenetmen Regional Executive.

Rev. Fr. Vazken Atmajian will attend and convey the Prelate's blessings.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՀԱՆԴԻՍԱՊԵՏԷ ՄՈՆԹԵՊԵՐԼՆՈՅԻ Ս. ԽԱՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԱՐԵՎԱԳԱԼԻ ԺԱՄԵՐԳՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԻՋԻՆՔԻ ՃԱՇԿԵՐՈՅԹԻՆ

Չորեքշաբթի, 18 Մարտը Միջինք Է:

Արեւագալի ժամերգութեանց աւարտին Թեմիս եկեղեցիներու սրահներուն մէջ տեղի պիտի ունենան եկեղեցիներու Տիկնանց Միութեանց եւ ՅՕՄ-ի կազմակերպած Միջինքի ճաշկերոյթները:

Առաջնորդ Սրբազան Հայրը պիտի հանդիսապետէ Մոնթեպեյլոյի Ս. Խաչ Մայր Տաճարի Արեւագալի ժամերգութեան եւ պիտի տայ իր պատգամը: Արարողութեան աւարտին Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ եկեղեցւոյ Տիկնանց Միութեան կազմակերպած Միջինքի ճաշկերոյթին, որ տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ «Բաղրամեան» սրահին մէջ:

PRELATE TO PRESIDE OVER SUNRISE SERVICE AND MID-LENT LUNCH AT HOLY CROSS CATHEDRAL

Wednesday, March 18th, is Mid-Lent or *Michink*.

To mark this occasion, each year the Ladies Auxiliaries of our parishes and local A.R.S. chapters organize luncheons, which take place following Sunrise Service.

On Wednesday, the Prelate will preside over Sunrise Service at Holy Cross Cathedral in Montebello and will later preside over the luncheon at "Bagramian" Hall.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ CASPSԻ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՄԻՕՐԵԱՅ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Շաբաթ, 14 Մարտին, Ազգ. Առաջնորդարանի հովանիին տակ գործող CASPS յանձնախումբը կազմակերպած է աշակերտական միօրեայ համագումար մը: Ինչպես ծանօթ է, CASPSը կը հոգայ հանրային վարժարաններ յաճախող հայ աշակերտներու կարիքները:

Յաջորդաբար երկրորդ տարին ըլլալով կազմակերպուող համագումարին հրաւիրուած են Կլենտէյլի երկրորդական վարժարաններէ շուրջ 180 աշակերտ, որոնք ունին գոհացուցիչ նիշեր:

Համագումարը տեղի պիտի ունենայ Ազգ. Առաջնորդարանի «Տիգրան եւ Չարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, առաւօտեան ժամը 8էն մինչեւ կէսօրէ ետք ժամը 1:

Համագումարին բացումը պիտի կատարէ Առաջնորդ Սրբազանը: Նախատեսուած են երկու գլխաւոր նիստեր, որոնց ընթացքին խօսք պիտի առնեն կրթական պատասխանատուներ:

Համագումարին ընդհանուր նիւթն է “Connecting to your Community”:

PRELATE TO PRESIDE OVER OPENING OF THE CASPS LEADERSHIP CONFERENCE

The Committee for Armenian Students in Public Schools (CASPS), which serves under the auspices of the Prelacy, has organized a one-day leadership conference in which close to 180 high school students will participate.

The second annual conference, with the theme “Connecting to your Community”, will feature two panels, during which renowned community leaders will address the students. The conference will take place on Saturday, March 14th, from 8:00 a.m. to 1:00 p.m. at the Prelacy “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall.

The Prelate will preside over the opening of the conference and convey his message to the students.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ ԲԱՑՈՒՄԸ

Ապրիլ 24-ի Հայկական Ցեղասպանութեան Ոգեկոչման Համագաղութային Մարմինը կազմակերպած է Ցեղասպանութեան Նուիրուած գիտաժողով մը, որ տեղի պիտի ունենայ Շաբաթ, 14 Մարտին, առաւօտուն ժամը 9:30-ին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ «Գոյումճեան» սրահին մէջ, Կլենտէյլ:

Առաջնորդ Սրբազանը ներկայ պիտի ըլլայ եւ պիտի կատարէ գիտաժողովին բացումը:

PRELATE TO PRESIDE OVER OPENING OF GENOCIDE RECOGNITION SYMPOSIUM

The Armenian Genocide United Commemorative Committee has organized a symposium on Armenian Genocide Recognition to take place on Saturday, March 14th, from 9:30 a.m. to 5:00 p.m. at "Kouyoumjian" Hall of St. Gregory Armenian Catholic Church in Glendale.

The Prelate will preside over the opening of the symposium.
